նորութիւններին յարելու համար: Այդ կրօնը այնքան խոր է թափանցել ժողովրդի սիրտը, որ արդէն մի ժառանգական բարոյական դրդիչ է դարձել, մի ղեկավարող բնազդ»: («Glimpses of Unfamiliar Yapan Lafcadio Hearn»):

Մեռածն ու ապրողը Ճապոնում սերտ կապված են իրար հետ անտեսանելի խորհրդաւոր հանգոյցներով:

Նրանք հաւատում են, որ մեռնողի հոգին շարունակում է իր գոյութիւնը մեզ շրջապատող մի աներեւոյթ աշխարհի մէջ:

Այդ հոգիները սաւառնում են տաճարների վրա, իրանց նախկին բնակարանների շուրջը, ուրախանալով իւրայիններ ուրախութեամբը եւ վշտակցելով նրանց վշտին: Նրանք շարունակ խառնւում են ընտանիքի գործերին եւ մինչեւ անգամ ճնշում են գործ դնում մարդկանց արարքների վրա՝ այս կամ այն միտքը ներշնչելով նրանց:

Բայց դա երբեք չի ազատում ճապոնացուն իր վարմունքի պատասխանատուութիւնից. նա պէտք է ընդունակութիւն ունենայ կշռելու իր սրտում եղած վատ ու լաւ աստուածների ազդեցութիւնը:

Այնպէս որ մարդու խիղճն է գերագոյն չափը, նա է միակ անկաշառ դատաւորը եւ չիտակ անաչառ ուսուցիչը:

Նախնիքների պաշտամունքը սրբութեամբ կատարում է ամեն ճապոնացի, անխտիր թէ չինտօ, թէ բուդդհիստ:

Ամեն տուն ունի իր փոքրիկ ընտանեկան խորանը, ուր պահւում են փայտէ փոքրիկ տախտակներ, որոնց վրա գրւած է ընտանիքի հանգուցեալ անդամի անդրաշխարհիկ անունը:

Որոշեալ օրերին խորանի առջեւ կանթեղ են վառում,